ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/6-1

ք. Երևան «04» հունիսի 2019թ.

ՀՀ արդարադատության նախարարությունն, ի դեմս՝ **գլխավոր քարտուղար Նունե Խաչատրյանի**, որը գործում է նախարարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **<Սմարթլայն> ՍՊԸ-ն**, ի դեմս Ընկերության տնօրեն **Տ. Ղարիբյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 (տաս) աշխատանքային օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 (տաս) աշխատանքային օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1068944 (մեկ միլիոն վաթսունութ հազար ինը հարյուր քառասունչորս)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման

ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ,

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

յոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) **էջից**, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ արդարադատության նախարարություն	«Սմարթլայն» ՍՊԸ
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8	ք.Երևան, Վարդանանց 110
ՀՀ ֆինանսների նախարարության	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 163007031509
Հ/Հ՝ 900011021921	ՀՎՀՀ 01548908
ՀՎՀՀ՝ 02506264	
Ն.Խաչատրյան	Տ.Ղարիբյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N ,
«04» հունիսի 2019թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/6-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	**30197622/3**	**1 թուղթ, A4 ֆորմատի, captain**	Ինտերնեշնլ փեյփր, ՌԴ	A4, չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, սպիտակությունը՝ ոչ պակաս քան 146(CIE համակարգով, առանց շեղումների), չափսերը՝ 210X297մմ., տուփերով՝ յուրաքանչյուրում 500 հատ, մեկ տուփի քաշը առնվազն՝ 2490 գ:	կիլոգրամ	**584**	**943744**	**1616**	**1616**	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 500 կիլոգրամ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 500 կիլոգրամ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 616 կիլոգրամ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.

2	3926 3410/ 3	2 ամրակ, փոքր, DL	"YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO " LTD, ՉԺՀ	Ամրակ, մետաղյա, փոքր, փաթեթավորված ստվարաթղթե տուփում: Տուփում առնվազն 100 հատ՝ 33մմ չափսի:	տուփ	78	7800	100	100	Ք.Երևան , Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 30 տուփ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 30 տուփ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 40 տուփ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.
3	39241 210/3	3 մկրատ, գրասենյակային, Scissors	"YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO " LTD, ՉԺՀ	Մկրատ, գրասենյակային, կտրող մասը՝ առնվազն 70մմ երկարությամբ՝ մետաղական, պլաստմասե բռնակով:	հատ	170	5100	30	30	Ք.Երևան , Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 15 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 15 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.
6	3926 3520/ 3	6 սեղմակ, միջին, DL	"YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO " LTD, ՉԺՀ	Սեղմակ միջին չափսի, գրասենյակային, մետաղական, սև գույնի, տուփերով: Տուփում 12 հատ: Չափսը՝ 40մմ լայնությամբ:	հատ	30	10800	360	360	Ք.Երևան , Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 120 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 120 հատ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 120 հատ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.

7	3926 3530/ 3	**7 սեղմակ, մեծ, DL**	"YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO " LTD, ՉԺՀ	Սեղմակ մեծ չափսի, գրասենյակային, մետաղական, սև գույնի, տուփերով: Տուփում 12 հատ: Չափսը՝ 50մմ լայնությամբ:	հատ	**40**	**9600**	**240**	**240**	Ք.Երևան , Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 72 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 72 հատ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 96 հատ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.
8	**30192 111/4**	**8 թանաքի բարձիկներ, Horse**	"YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO " LTD, ՉԺՀ	Թանաքի բարձիկ՝ պլաստմասե՝ բացվող կափարիչով, բարձիկի չափսերը առնվազն՝ 70x110մմ, բարձիկը՝ կապույտ գույնի:	հատ	**200**	**2000**	**10**	**10**	Ք.Երևան , Վ.Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում,
9	**30197 323/2**	**9 կարիչ, 50-ից ավելի թերթի համար, DL**	"YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO " LTD, ՉԺՀ	Կարիչ գրասենյակային՝ ստեպլեր, նախատեսված թղթերը միմյանց մետաղական ասեղով ամրացնելու համար, մինչև 180 հատ թուղթ (թղթի խտությունը՝ 80 գ/մ^2) առանց ասեղի աղավաղումների միաժամանակ կարելու հնարավորությամբ:	հատ	**800**	**1600**	**2**	**2**	Ք.Երևան , Վ.Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում,

11	3926 3420/ 3	**11 ամրակ, մեծ, DL**	"YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO " LTD, ՉԺՀ	Ամրակ, մետաղյա, մեծ, փաթեթավորված ստվարաթղթե տուփում: Տուփում առնվազն 100 հատ՝ 50մմ չափսի:	տուփ	**170**	**6800**	**40**	**40**	Ք.Երևան , Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 20 տուփ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 20 տուփ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.
14	30197 231/3	**14 թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ, Impulse**	Իմպուլս Ա, ՀՀ	Թղթապանակ՝ պոլիմերային թաղանթ՝ ֆայլ, թափանցիկ՝ փայլուն: Հաստությունը՝ առնվազն 50 միկրոն: A4 չափսի թղթերի համար: Նախատեսված արագակարին ամրացնելու համար:	հատ	**8.5**	**8500**	**1000**	**1000**	Ք.Երևան , Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 300 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 300 հատ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 400 հատ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.
17	30192 100/4	**17 ռետին հասարակ, Eraser**	"YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO " LTD, ՉԺՀ	Ռետին հասարակ, գույնը՝ սպիտակ, փաթեթավորված թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով, չափսերը՝ առնվազն 22x8x60մմ:	հատ	**50**	**2500**	**50**	**50**	Ք.Երևան , Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 25 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 25 հատ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.

19	30192 160/2	19 շտրիխներ, Micai	"YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO " LTD, ՉԺՀ	Շտրիխ՝ սպիտակեցնող՝ գրասենյակային, գրչանման տեսքով: Սպիտակեցնող ծայրը՝ գնդիկավոր գրչաձև գրող, սպիտակեցնող հեղուկը՝ առնվազն 12մլ: Արտադրման տարեթիվը՝ 2019թ.:	հատ	155	15500	100	100	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 30 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 30 հատ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 40 հատ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.
20	30192 710/2	20 սոսնձամատիտ, գրասենյակային, Glue Stick	"YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO " LTD, ՉԺՀ	Սոսնձամատիտ գրասենյակային, ոչ տոքսիկ, պլաստմասե իրանով, սոսինձի զուտ քաշը՝ առնվազն **15գ:** En 71/3՝ եվրոպական և ASTM D-4236 ԱՄՆ ստանդարտներին համապատասխան(այդ մասին արտատպված սոսնձամատիտի իրանին): Արտադրման տարեթիվը՝ 2019թ.:	հատ	200	20000	100	100	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 30 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 30 հատ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 40 հատ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.
22	30197 234/2	22 թղթապանակ, կոշտ կազմով, Alba Rado	"YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO " LTD, ՉԺՀ	Թղթապանակ, կոշտ կազմով,ռեգիստրատոր, մետաղական կարիչով՝ առանձին մետաղական ֆիքսող հարմարանքով: Կարիչը՝ մեխանիկական մեխանիզմով: Հաստությունը՝ 75-80մմ,	հատ	480	24000	50	50	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 25 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 25 հատ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև

				եզրանկյունները՝ մետաղական թիթեղապատ: Գույնը՝ միատոն սև:							20.09.2019թ.
23	30192 130/3	23 մատիտներ, Skyglory	"YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO " LTD, ՉԺՀ	Մատիտ՝ HB կոշտության գրաֆիտե միջուկով, սրված գրելու համար, փայտյա կամ փայտին փոխարինող նյութից պատրաստված, հետևի մասում՝ ռետին:	հատ	20	1000	50	50	Ք.Երևան , Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 25 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 25 հատ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.
32	30197 331/3	32 դակիչ մեծ, DL	"YIWU GUYUE IMPORT AND EXPORT CO " LTD, ՉԺՀ	Դակիչ՝ ծակոտիչ գրասենյակային, առնվազն 20 հատ թուղթ (Խտությունը՝ 80 գ/մ²) առանց աղավաղումների միաժամանակ դակող:	հատ	1000	10000	10	10	Ք.Երևան , Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 5 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 5 հատ ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.

ԳՆՈՐԴ

ՀՀ արդարադատության նախարարություն
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011021921
ՀՎՀՀ՝ 02506264

Ն.Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Այլէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՎՀՀ 01548908

Տ.Ղարիբյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 1
«04» _____ 2019թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/6-1 ծածկագրով պայմանագրի

ՀՀ դրամ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30197622/3	1 թուղթ, A4 ֆորմատի, captain	-	-	-	-	-	330310	566246	566246	566246	943744	943744	943744	943744
2	39263410/3	2 ամրակ, փոքր, DL	-	-	-	-	-	2730	4680	4680	4680	7800	7800	7800	7800
3	39241210/3	3 մկրատ, գրասենյակային, Scissors	-	-	-	-	-	1785	3060	3060	3060	5100	5100	5100	5100
6	39263520/3	6 սեղմակ, միջին, DL	-	-	-	-	-	3780	6480	6480	6480	10800	10800	10800	10800

7	39263530/3	7 սեղմակ, մեծ, DL	-	-	-	-	-	3360	5760	5760	5760	9600	9600	9600	9600
8	30192111/4	8 թանաքի բարձիկներ, Horse	-	-	-	-	-	700	1200	1200	1200	2000	2000	2000	2000
9	30197323/2	9 կարիչ, 50-ից ավելի թերթի համար, DL	-	-	-	-	-	560	960	960	960	1600	1600	1600	1600
11	39263420/3	11 ամրակ, մեծ, DL	-	-	-	-	-	2380	4080	4080	4080	6800	6800	6800	6800
14	30197231/3	14 թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ, Impulse	-	-	-	-	-	2975	5100	5100	5100	8500	8500	8500	8500
17	30192100/4	17 ռետին հասարակ, Eraser	-	-	-	-	-	875	1500	1500	1500	2500	2500	2500	2500
19	30192160/2	19 շտրիխներ, Micai	-	-	-	-	-	5425	9300	9300	9300	15500	15500	15500	15500
20	30192710/2	20 սոսնձամատիտ, գրասենյակային, Glue Stick	-	-	-	-	-	7000	12000	12000	12000	20000	20000	20000	20000
22	30197234/2	22 թղթապանակ,՝ կոշտ կազմով, Alba Rado	-	-	-	-	-	8400	14400	14400	14400	24000	24000	24000	24000

23	30192130/3	23 մատիտներ, Skyglory	-	-	-	-	-	350	600	600	600	1000	1000	1000	1000
32	30197331/3	32 դակիչ մեծ, DL	-	-	-	-	-	3500	6000	6000	6000	10000	10000	10000	10000
Ընդամենը՝			-	-	-	-	-	370630	641366	641366	641366	1068944	1068944	1068944	1068944

ԳՆՈՐԴ

ՀՀ արդարադատության նախարարություն Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011021921
ՀՎՀՀ՝ 02506264

Ն.Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908

Տ.Ղարիբյան
/ստորագրություն/

01548908
"ՍՄԱՐԹԼԱՅՆ"
"СМАРТЛАЙН"
«Կ»

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/6-1
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «04» հունվարի 2019թ.

<Սմարթլայն> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն **Տ. Ղարիբյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

Ընկերությունը մասնակցում է **<< արդարադատության նախարարության** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված **ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/6** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.1 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն << կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.3 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.4 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.5 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908

Տնօրեն Տ. Ղարիբյան
/ստորագրություն/
Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**

2. Թիվ **ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/6-1**

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ **<Սմարթլայն> ՍՊԸ**

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 163007031509

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **01548908**

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը՝ **ՀՀ արդարադատության նախարարություն**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02506264**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ կենտրոնական գանձապետարան**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900005000758**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ **105894 (մեկ հարյուր հինգ հազար ութ հարյուր իննսունչորս)**

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ, AMD**

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *պայմանագրի կատարման ապահովման համար*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ ակցեպտավորված վճարում

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 22.բ. Կ.Տ.	21.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 21.բ. Կ.Տ.
24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.